ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/15/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 13 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի, Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2025 թվականի փետրվարի 13-ին քննելով Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով առերևույթ խախտման կապակցությամբ 2025 թվականի հունվարի 22-ի թիվ ՎԻՎ/15/2025 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1.1 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով սահմանված գործառույթների իրականացման շրջանակներում Հանձնաժողովի հանրային ծառայողների վարքագծի վերահսկողության վարչության (այսուհետ՝ Վարչության) կողմից համապատասխան պաշտոնատար անձանց

անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման պլանի շրջանակներում իրականացվել է Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի վերաբերյալ ուսումնասիրություն:

1.2 Ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ 2024 թվականի փետրվարի 13-ին, Գավառի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի, N ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-23/2 գնման պայմանագիր է կնքել «Գավառտրանս» ՍՊԸ-ի հետ, որում, ըստ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգում առկա տվյալների, բաժնեմասնակցություն են ունեցել Գուրգեն Մարտիրոսյանին «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձինք, մասնավորապես նրա որդիները՝ Երվանդ, Յուրի, Նարեկ Մարտիրոսյանները, ինչպես նաև քույրը՝ Նարինե Մարտիրոսյանը՝ յուրաքանչյուրը 10 տոկոս բաժնեմասնակցության չափով: Նշված պայմանագրի կնքմամբ Գուրգեն Մարտիրոսյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

1.3 Հանձնաժողովի 2025 թվականի հունվարի 22-ի թիվ ՎԻՎ/15/2025 որոշմամբ վերոնշյալ առերևույթ խախտման հիմքով հարուցվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

1.4 Հանձնաժողովը 2025 թվականի հունվարի 22-ին Գուրգեն Մարտիրոսյանին հասցեագրել է թիվ 01/305-2025 ծանուցումը՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի հատկանիշներով վարույթի մասնակցի կողմից դրսևորած առերևույթ վարչական իրավախախտման վերաբերյալ՝ հրավիրելով 2025 թվականի փետրվարի 10-ին, ժամը՝ 15:00-ին, վերջինիս ներկայությամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու, իսկ 2025 թվականի փետրվարի 11-ին, ժամը 15:00-ին՝ նշված առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի

նյութերի հիման վրա իրականացվող գործի քննությանը մասնակցելու: Նշված ծանուցումը վերջինիս կողմից ստացվել է 2025 թվականի հունվարի 25-ին (հիմք՝ ALO126264196AM ծանուցագիր):

1.5 2025 թվականի հունվարի 10-ին պատշաճ ծանուցված Գուրգեն Մարտիրոսյանի բացակայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/09/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.6 2025 թվականի փետրվարի 10-ին Հանձնաժողովում ստացվել է Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Մարիետա Գաբրիելյանի միջնորդությունը, որով նա խնդրել է հետաձգել 11.02.2025թ. նշանակված լսումները և թույլատրել ծանոթանալ վարչական վարույթի նյութերին: Միջնորդությունը Հանձնաժողովի կողմից ամբողջությամբ բավարարվել է:

1.8 2025 թվականի հունվարի 13-ին վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ/15/2025 գործի քննությունն իրականացվել է պատշաճ ծանուցված վարույթի մասնակցի ներկայացուցիչ՝ փաստաբան Արամ Եսայանի մասնակցությամբ:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշում ու պարզաբանումներ

Արձանագրված առերևույթ իրավախախտման առնչությամբ 2025 թվականի փետրվարի 13-ին վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացվել է հետևյալ **գրավոր դիրքորոշումը՝**

2.1 «(...) Որպես ենթադրյալ իրավախախտման փաստական հիմք է դիտարկվել համայնքի ղեկավարի կողմից իր հետ փոխկապակցված անձանց բաժնեմասնակցությամբ ընկերության հետ գնման պայմանագիր կնքելը, որն իբրև առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման: Մինչդեռ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջների ենթադրյալ խախտում:

Գտնում ենք, որ Համայնքի ղեկավարի գործողությունները պետք է բովանդակային գնահատման առարկա դառնա օրենսդրության համակարգային վերլուծության լույսի ներքո՝ ելնելով համայնքի ղեկավարի վարքագծի ընդհանուր սկզբունքներից, կոռուպցիայի կանխարգելման՝ որպես հիմնական նպատակից, համայնքի շահերի պաշտպանության երաշխավորումից, և խուսափել գործողությունների մակերեսային վերլուծությունից:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներն են՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը:

Այս իրավակարգավորումը Հանձնաժողովի լիազորությունների տեսանկյունից ինքնանպատակ չէ և միտված է պետական և համայնքային պաշտոններ զբաղեցնող անձանց մոտ շահերի բախման դեպքերը բացառելը, այդկերպ հնարավոր կոռուպցիոն ռիսկերը կանխարգելելը:

Մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է.

1. Շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

7. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

9. Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի առնչությամբ շահերի բախման իրավիճակի առկայության մասին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունը կամ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին որոշումը եռօրյա ժամկետում հրապարակվում է հանձնաժողովի պաշտոնական կայքէջում: Վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացության կապակցությամբ ներկայացնել հրապարակային պարզաբանում, որն ստացվելու պահից եռօրյա ժամկետում հրապարակվում է այն մարմնի պաշտոնական կայքէջում, որտեղ նա պաշտոն է զբաղեցնում:

Առաջին հերթին անհրաժեշտ է քննարկել՝ արդյո՞ք առկա է շահերի բախման իրավիճակ, թե ոչ, այսինքն՝ պատասխանել այն հարցին, թե կոնկրետ իրավիճակում Համայնքի ղեկավարի մասնավոր շահերն ազդե՞լ են կամ կարո՞ղ էին ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) հետ պայմանագիր կնքելու որոշման ընդունման վրա:

31.01.2024 թվականին Գավառի համայնքապետարանը տարածել է հայտարարություն գնանշման հարցման մասին, որով հայտարարել է գնանշման հարցման մրցույթ (այսուհետ նաև՝ **Մրցույթ**)՝ ուղեվորափոխադրող ավտոմեքենաների վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով (կից ներկայացնում ենք Գավառի համայնքապետարանի կարիքների համար «Ուղեվորափոխադրող» ավտոմեքենաների վարձակալության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի պատճենը):

Մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել ընդամենը մեկ ընկերություն՝ «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն (կից ներկայացնում ենք 07.02.2024 թվականի թիվ 2 Արձանագրության պատճենը):

Հանձնաժողովը որոշում է կայացրել կատարել գնում՝ Ընկերության բավարար գնահատված հայտի և նվազագույն գնառաջարկի հիման վրա:

Ընդ որում, նույն օրը հանձնաժողովը տվել է հայտարարություն՝ շահերի բախման բացակայության մասին (կից ներկայացնում ենք 07.02.2024 թվականի Շահերի բախման մասին հայտարարության պատճենը):

13.02.2024 թվականին Գավառի համայնքապետարանը պայմանագիր է կնքել Ընկերության հետ (կից ներկայացնում ենք պայմանագրի պատճենը):

Նախ, Հանձնաժողովի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝ որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):

Այսինքն՝ հայտարարված գնման ընթացակարգի հաղթողին օրենքով սահմանված կարգով որոշում է ոչ թե Համայնքի ղեկավարը, այլ ընթացակարգի կազմակերպման նպատակով կազմված գնահատող հանձնաժողովը: Համայնքի ղեկավարն իրավասու չէր և որևէ կերպ չի ազդել գնահատող հանձնաժողովի որոշման կայացման վրա, ուստի խոսք անգամ գնալ չի կարող վերջինիս անկողմնակալության կամ անաչառության վրա որևէ մասնավոր շահի ազդեցության մասին, քանի որ ինքը միայն ստորագրել է պայմանագիրը համայնքապետարանի անունից, իսկ Մրցույթի հաղթողին օրենքով սահմանված կարգով ընտրել է ոչ թե Համայնքի ղեկավարը, այլ գնահատող հանձնաժողովը: Ընդ որում վերջինս անգամ գնահատման հանձնաժողովի անդամ չի եղել:

Երկրորդ, Մրցույթին մասնակցել է ընդամենը մեկ ընկերություն՝ «ԳԱՎԱՌՏՐԱՆՍ» ՍՊԸ-ն: Այսինքն՝ Գավառ համայնքում Ընկերությունը միակն էր, որ հնարավորություն ուներ մատուցելու անհրաժեշտ ծառայությունները և միակն է եղել, որ նման պատրաստակամություն է հայտնել: Այլ մասնակիցների բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպե՞ս, ու՞մ նկատմամբ և ո՞ր հարցում Համայնքի ղեկավարը կարող էր լինել աչառու կամ կողմնակալ: Որևէ մասնավոր շահի առկայություն չէր կարող ազդել մրցույթի ընթացքի և որոշումների կայացման վրա, երբ այլ մասնակիցներ չկային կողմնակալություն դրսևորելու համար:

Ընդ որում, Համայնքի ղեկավարն իրավասություն չուներ անգամ խոչընդոտելու Ընկերությանը որպես հաղթող ընտրելու գործընթացին, քանի որ նախ գնման

ընթացակարգի հաղթողին ընտրելն իր լիազորությունների շրջանակից դուրս է և երկրորդը՝ որևէ այլ մասնակից Մրցույթին մասնակցության հայտ չի ներկայացրել:

Եվ վերջապես, Համայնքի ղեկավարի մերձավոր ազգականներից և ոչ մեկը չի հանդիսանում Ընկերության իրական շահառու:

«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ իրական շահառուն ֆիզիկական անձ է, որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է, կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ Իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա է սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ:

Ընկերությունը 05.02.2024 թվականին ներկայացրել է Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարություն, որում նշել է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը (կից ներկայացնում ենք 05.02.2024 թվականի Գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարության պատճենը):

Տվյալ պահի դրությամբ Իրական շահառուի մասին վերջին հայտարարագիրը 01.09.2023 թվականի հայտարարագիրն է եղել (կից ներկայացնում ենք 01.09.2023 թվականի իրական շահառուի մասին հայտարարգրից քաղվածք): Ընկերությունն ունեցել է մեկ իրական շահառու՝

Հրայր Գուլաբյանը, ով չի հանդիսանում Համայնքի ղեկավարի ազգականը (որևէ այլ փոխկապակցվածությունը ևս բացակայում է):

Այսինքն՝ եթե անգամ մի պահ վերացարկվենք իրականությունից և պատկերացնենք, որ Ընկերության իրական շահառուների՝ Համայնքի ղեկավարի մերձավոր ազգական հանդիսանալու հանգամանքը կարող էր ազդել գնահատման հանձնաժողովի անդամների որոշման վրա, ապա պետք է արձանագրենք, որ Ընկերության իրական շահառուներից ոչ ոք Համայնքի ղեկավարի հետ առնչություն չունի, իսկ գնահատման հանձնաժողովն Ընկերության հետ շահերի բախման բացակայության մասին հավաստիացել է հենց միայն Իրական շահառուների մասին հայտարարագրի ուսումնասիրության միջոցով (այլ տեղեկատվություն գնման գործընթացում ուսումնասիրման առարկա չի էլ դառնում): **Ստացվում է, որ մասնավոր շահը ևս բացակայել է:**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

Այսպիսով, Համայնքի ղեկավարին վերագրվող իրավախախտման օբյեկտիվ կողմն անվիճելիորեն բացակայում է, որպիսի փաստը հաստատվում է կից ներկայացվող ապացույցների և սույն դիրքորոշման միջոցով:

Թեև ողջ վերոգրյալը բավական է Համայնքի ղեկավարին վերագրվող իրավախախտման փաստի բացակայությունը հիմնավորելու համար, այնուամենայնիվ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Համայնքի ղեկավարի բարեվարքության գնահատման վրա սույն դեպքի ազդեցությունը բացառելու հանգամանքին:

Այս հարցի կապակցությամբ քննարկման առարկա պետք է դառնան հանրային ծառայողի վարքագծի սկզբունքերը, որոնք սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում, վարքագծի սկզբունքներն են հանրությանը ծառայելու

գիտակցումը, հավատարմությունը հանրային շահին, բարեկրթությունը և հարգալիրությունը, բարեխղճությունը, օբյեկտիվությունը:

Նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների լիազորությունների իրականացումն ուղղված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հանրության բարօրության ապահովմանը՝ պետության քաղաքականության նպատակների արդյունավետ իրագործման միջոցով:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին հոդվածի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորությունները գործադրում են ի շահ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և հանրության:

Այս սկզբունքերն իրենց արտացոլումն են ստացել նաև համայնքի ղեկավարի երդման տեքստում: Այսպես, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն ստանձնում է իր ընտրվելուց հետո՝ երրորդ օրացուցային օրը, ավագանու՝ օրենքի ուժով հրավիրված նիստում համայնքի բնակիչներին տրված հետևյալ երդմամբ.

«Ստանձնելով (նշվում է համապատասխան համայնքի անվանումը) համայնքի ղեկավարի պաշտոնը՝ երդվում եմ.

Պարտավորվում եմ պաշտպանել համայնքի իրավունքները, օրինական շահերը և սեփականությունը, ուժերիս անմնացորդ նվիրումով սատարել ժողովրդի հավատին, նպաստել նրա նյութական և հոգևոր վերելքին»:

Ստացվում է, որ օրենսդիրը, բնականաբար, առաջնային նպատակ է սահմանել հանրության շահերի պաշտպանության նպատակը, որը պետք է վեր դասել ցանկացած այլ նպատակից:

Առավել քան ակնհայտ է, որ Համայնքի ղեկավարը, առաջնորդվելով հանրային ծառայողի վարքագծի սկզբունքներով, մասնավորապես՝ հանրությանը ծառայելու գիտակցմամբ, հանրային շահին հավատարմությամբ և, հավատարիմ մնալով իր տված երդմանը, գերադասել է համայնքի շահերի պաշտպանությունը՝ չհետաձգելով և անհնարին չդարձնելով համայնքի համար առաջնային նշանակության խնդրի լուծումը:

Բացի այդ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք և հանրային ծառայողներն իրենց լիազորություններն իրականացնելիս դրսևորում են անկողմնակալություն՝ բացառելով որևէ խտրականություն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շահերի բախման իրավիճակը բացակայել է, Համայնքի ղեկավարն իրավասություն չի ունեցել որևէ կերպ ազդելու Մրցույթի արդյունքում կայացվող որոշման վրա, որևէ արտոնություն չի ընձեռել և չէր էլ կարող ընձեռել Ընկերությանը, գործել է համայնքի շահերի պաշտպանության միտումով, միմիայն իր լիազորությունների և հանրային ծառայողի վարքագծի կանոնների սահմաններում՝ սույն դեպքը չպետք է որևէ կերպ ազդեցություն ունենա Համայնքի ղեկավարի բարեվարքության գնահատման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է.

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը: Քննարկվող իրավիճակում վարչական իրավախախտման դեպքը և կազմը բացակայում են:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26.1-րդ հոդվածի 11-րդ մասը սահմանում է.

Անձի բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացություն ներկայացվում է բացառապես այն դեպքում, երբ տվյալների ուսումնասիրության, համադրման և ամփոփման արդյունքով հայտնաբերվում են տվյալներ, որոնք ինքնին հանդիսանում են բավարար գործոն անձի բարեվարքության վերաբերյալ բացասական բնույթի եզրակացության տրամադրման համար, մասնավորապես՝

2) հիմնավոր և հավաստի տվյալներ, որոնց բնույթը, քանակը կամ դրանց ամբողջությունն էական ազդեցություն ունեն անձի մասնագիտական գործունեության անկախության, անաչառության վրա կամ ձևավորում են հանրային անվստահություն՝

նվազեցնելով հանրային իշխանության մարմինների հեղինակությունը, և որոնք վերաբերում են՝

բ. անձի վարչական կամ կարգապահական պատասխանատվության ենթարկված լինելու, անձի կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության, նրա կողմից վարքագծի կանոնների, շահերի բախման, անհամատեղելիության պահանջների,այլ սահմանափակումների պահպանման վերաբերյալ տվյալներին, որոնք ձևավորում են բարեվարքության առնչությամբ ռիսկ՝ հաշվի առնելով արարքի բնույթը, դրա հնարավոր ազդեցությունն անձի հետագա մասնագիտական գործունեության վրա, խախտումների քանակը և դրանց առնչությամբ հնարավոր հանրային ընկալումը, (...):»:

2.2 Վարչական վարույթի գործի քննության ընթացքում Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացվեց միջնորդություն՝ Մրցույթի գնահատող հանձնաժողովի անդամներին վարչական վարույթում որպես վկա ներգրավելու վերաբերյալ, քանի որ, ըստ ներկայացուցչի՝ Մրցույթը կազմակերպվել է Հանձնաժողովի անդամների կողմից և հանձնաժողովի անդամներն են տիրապետում կարևոր հանգամանքներին, և վերջիններիս դիրքորոշումը կարևոր նշանակություն կարող է ունենալ:

2.3 Վարչական վարույթի գործի քննության ընթացքում Գուրգեն Մարտիրոսյանի ներկայացուցչի կողմից ներկայացվեց նաև մեկ այլ միջնորդություն՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ին՝ որպես վկա ներգրավելու մասին, քանի որ, ըստ ներկայացուցչի՝ վարչական վարույթը վերաբերում է նաև «Գավառտրանս» ՍՊԸ-ի գործարար համբավին:

III. Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/15/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում, որ՝

3.1 ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի համայնքապետարանի պաշտոնական կայք էջի համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանը ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի

ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 20-ի N 2-Ա որոշման համաձայն՝ Գավառ համայնքի ավագանու համամասնական ընտրություններում օրենքի ուժով ընտրվել է Գավառ խոշորացված համայնքի ղեկավար և պաշտոնավարում է մինչ օրս: (https://gavarihamaynqapetaran.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=9c246158-3936-40fd-9733-28ec004d1fcb):3.2 Գուրգեն Մարտիրոսյանի 2022 և 2023 թվականների պաշտոնատար անձի՝ գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի տարեկան հայտարարագրերի համաձայն՝ Երվանդ, Յուրի, Նարեկ Մարտիրոսյանները հանդիսանում են Գուրգեն Մարտիրոսյանի որդիները, իսկ Նարինե Մարտիրոսյանը՝ քույրը:

3.3 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Երվանդ, Յուրի, Նարեկ, Նարինե Մարտիրոսյանները 2023 թվականի ապրիլի 12-ից հանդիսանում են «Գավառտրանս» ՍՊ Ընկերության 10-ական տոկոս բաժնեմասերի սեփականատերերը:

3.4 Գնումների armeps համակարգի համաձայն՝ 2024 թվականի փետրվարի 13-ին Գավառի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի, N ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-23/2 գնման պայմանագիր է կնքել «Գավառտրանս» ՍՊԸ-ի հետ:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի գործողությունը տարածվում է հանրային իշխանության մարմինների վրա, ինչպես նաև հանրային պաշտոններ և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վրա: Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանրային պաշտոնը դասակարգվում է խմբերի՝ պետական և համայնքային: Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորման համաձայն՝ համայնքի ղեկավարի պաշտոնը հանդիսանում է **համայնքային քաղաքական պաշտոն**:

4.2 Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են

կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա:

4.3 Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև **այն** անձանց կամ **կազմակերպություններին, որոնց հետ** ինքը կամ **իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար**, քաղաքական **կամ այլ գործնական** կամ անձնական **հարաբերություններ**: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: (…):

4.4 Նույն հոդվածի 11-րդ մասը կարգավորում է փոխկապակցված անձանց շրջանակը, որի 1-ին կետի համաձայն՝ սույն հոդվածի իմաստով՝ փոխկապակցված անձինք են՝ պաշտոն զբաղեցնող անձի ամուսինը, **պաշտոն զբաղեցնող անձի կամ նրա ամուսնու զավակը** (այդ թվում՝ որդեգրած), ծնողը (այդ թվում՝ որդեգրողը)**, քույրը,** եղբայրը:

4.5 Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **պաշտոն զբաղեցնող անձը պետք է խուսափի շահերի բախման իրավիճակի առաջացումից**, **ձեռնպահ մնա շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց** կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման կայացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքներին (փաստաթղթերի նախագծերի կազմում, քննարկումների կազմակերպում, որոշման վրա ազդեցություն ունեցող հանձնախմբերի ձևավորում և այլն) մասնակցելուց կամ այլ կերպ որոշման կայացման գործընթացին մասնակցելուց:

4.6 Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ եթե վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող պաշտոն զբաղեցնող անձի կողմից կամ նրա մասնակցությամբ իր լիազորությունների շրջանակում գործողության կատարումը (անգործությունը) կամ որոշման ընդունումը կարող է հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, **ապա պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է 10-օրյա ժամկետում** իր վերադաս անձին կամ անմիջական ղեկավարին ներկայացնել գրավոր

հայտարարություն **շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին**, որը ենթակա է քննարկման անհապաղ:

4.7 Նույն հոդվածի 7-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում պարտավոր է այդ մասին գրավոր հայտարարություն ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով**, որն առաջարկում է ձեռնարկել իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր, այդ թվում՝ հանդես գալ կոնկրետ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ:

4.8 Նույն հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ նախքան վերադասի կամ անմիջական ղեկավարի գրավոր համաձայնությունը կամ **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի առաջարկությունն ստանալն անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց** կամ որոշում կայացնելուց, բացառությամբ այն դեպքերի, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ՝ այդ մասին տեղեկացնելով վարույթի մասնակիցներին, իր վերադասին կամ անմիջական ղեկավարին, իսկ վերադաս կամ անմիջական ղեկավար չունենալու դեպքում՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

4.9 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված է գնումների գործընթացի կազմակերպման կարգը (**այսուհետ՝ Կարգ**), որի 4-րդ կետով սահմանված իրավակարգավորման համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝ 1) գնումների պլանավորում, 2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը), 3) **պայմանագրի կնքում**, 4) պայմանագրի կատարում և կառավարում, Կարգի 6-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ պատվիրատուի ղեկավարը՝ **տեղական ինքնակառավարման մարմիններում՝ համայնքի ղեկավարն է կամ վերջինիս կողմից լիազորված պաշտոնատար անձն է**, Կարգի 7-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության

համաձայն՝ **պատվիրատուի ղեկավարը**, ի թիվս այլ գործառույթների, **կնքում է պայմանագիրը**:

4.10 «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

4.11 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է՝ պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և **շահերի բախման կարգավորումների պահպանմանը հետևելը**:

4.12 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.13 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.14 Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր

հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.15 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.16 Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող կամ **քաղաքական պաշտոն զբաղեցնող անձի կողմից շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն չներկայացնելը**՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

4.17 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

«Հանրային ծառայության մասին» օրենքով կարգավորվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձի կողմից նույն օրենքով սահմանված դեպքերում շահերի բախման իրավիճակի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարություն ներկայացնելուն առնչվող իրավահարաբերությունները:

Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է «շահերի բախման իրավիճակի» հասկացությունը, որի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահերն ազդում են կամ կարող են ազդել վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա: Միաժամանակ, նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դրույթով բացահայտված են «Պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահի» բովանդակային սահմանները, համաձայն որի

պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև **այն** անձանց կամ **կազմակերպություններին, որոնց հետ** ինքը կամ **իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար**, քաղաքական **կամ այլ գործնական** կամ անձնական **հարաբերություններ**: Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար: (…):

Վերոնշյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ Օրենքով սահմանված իմպերատիվ պահանջներն ապահովում են պաշտոնատար անձի մասնավոր շահի ինչպես հնարավոր, այնպես էլ փաստացի ազդեցության չեզոքացումը վերջինիս պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա, որը կարող է դրսևորվել ինչպես որոշում կայացնելու, այնպես էլ գործողություն կատարելու արարքներում:

Սույն գործով Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանը Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, ուստի, վերջինիս նկատմամբ կիրառելի են Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված շահերի բախմանը վերաբերող իրավակարգավորումները:

Սույն գործում առկա փաստական տվյալների համաձայն՝ Գուրգեն Մարտիրոսյանը, որպես պատվիրատուի ղեկավար (Գավառ համայնքի ղեկավար), իր լիազորությունների շրջանակում համայնքի կարիքների համար պայմանագիր է կնքել Օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձանց՝ որդիների և քրոջ բաժնեմասնակցությամբ առևտրային կազմակերպության՝ «Գավառտրանս» ՍՊԸ-ի հետ, այսինքն՝ այն ընկերության հետ, որի հետ իր հետ փոխկապակցված անձինք ունեն **գործարար** (տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող) կամ այլ գործնական **հարաբերություններ**:Նշված պայմանագրի կնքմամբ Գուրգեն Մարտիրոսյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ այդ

մասին «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ այդ կերպ թույլ տալով «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջի առերևույթ խախտում:

Հանձնաժողովն ուսումնասիրել է վարույթի մասնակցի ներկայացուցչի՝ դիրքորոշումն առ այն, որ իրականացված գնման գործընթացում հայտարարված մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել միայն «Գավառտրանս» ՍՊԸ-ն, իսկ հայտարարված գնման ընթացակարգի հաղթողին որոշել է ոչ թե համայնքի ղեկավարը, այլ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն ձևավորված հանձնաժողովը, որի որոշմամբ ընտրված կազմակերպության հետ էլ կնքվել է գնման պայմանագիրը: Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը.

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից սահմանված «Հանրային ծառայողների վարքագծի կանոնագրքի» (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) համաձայն՝ (R(2000)10 Հանձնարարական, ընդունված 106-րդ նստաշրջանի ընթացքում 2000 թվականի մայիսի 11-ին, Հոդված 13) շահերի բախումն առաջանում է բոլոր այն դեպքերում, երբ պաշտոնատար անձի մոտ առկա է անձնական այնպիսի շահ, որը կարող է ազդել կամ թվում է, թե կարող է ազդել պաշտոնատար անձի պաշտոնեական լիազորությունների անաչառ և օբյեկտիվ իրականացման վրա: Այս պարագայում անձնական շահը ենթադրում է առավելությունների կամ արտոնությունների ձևավորում իր անձի կամ իր ընտանիքի անդամների, մերձավոր ազգականների, ընկերների, անձանց կամ կազմակերպությունների համար, որոնց հետ պաշտոնատար անձն առնչություն ունի:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Հանրային ծառայությունում շահերի բախման իրավիճակների կառավարման մասին ուղեցույցում շահերի բախումը բնութագրում է հետևյալ կերպ՝ շահերի բախումն ընդգրկում է հանրային ծառայողի մոտ հանրային պարտականությունների և մասնավոր շահերի կոնֆլիկտը, որտեղ հանրային ծառայողն ունի մասնավոր շահ, որը կարող է անտեղի ազդեցություն ունենալ հանրային ծառայողի պաշտոնեական պարտականությունների իրագործման վրա: Եթե շահերի բախման իրավիճակները պատշաճորեն չնույնականացվեն և

կառավարվեն, ապա դրանք կարող են լրջորեն վտանգել կազմակերպությունների բարեվարքությունը և հանգեցնել կոռուպցիայի ինչպես հանրային ոլորտում, այնպես էլ մասնավոր:

Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսի «Շահերի բախումը տեղական և տարածքային մակարդակներում» հուշագրում սահմանվում են շահերի բախման քաղաքականության նպատակները և խնդիրները՝ նշելով, որ ընդհանուր առմամբ, շահերի բախման քաղաքականությունները չպետք է միայն լինեն շահերի բախման կանխարգելման գործիք: Դրանք պետք է նաև՝

- Մեծացնեն վստահությունը կառավարության նկատմամբ,
- Ցուցադրեն ընտրված ներկայացուցիչների և պաշտոնատար անձանց բարեվարքության բարձր մակարդակը,
- Կանխարգելեն շահերի բախման ի հայտ գալը, քանի որ պաշտոնական գործողությունները ենթակա կլինեն հանրային հսկողության,
- Պետական պաշտոնավարումից հետ պահեն այնպիսի անձանց, որոնց անձնական ֆինանսական միջոցները ենթակա չեն հանրային հսկողության,
- Հանրությանն ավելի մեծ հնարավորություն ընձեռեն պետական պաշտոնատար անձանց կատարողականի մասին դատելու՝ վերջինների արտաքին ֆինանսական շահերի լույսի ներքո:

Ոչ միայն Եվրոպայի Խորհրդի կողմից սահմանված Վարքագծի կանոնագիրքը, այլ նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) շահերի բախման հասկացության մեջ ընդգրկում են նաև հավանական և թվացյալ շահերի բախումը: Ըստ ՏՀԶԿ-ի մեկնաբանության՝ հավանական և **թվացյալ շահերի բախումը ևս վտանգում է պաշտոնեական որոշումների անաչառության նկատմամբ հանրային վստահությունը**: Պաշտոնատար անձինք որոշումների կայացման ժամանակ պետք է հաշվի առնեն նաև **հանրային ընկալումները:** ՏՀԶԿ-ն առաջարկում է, որ հավանական և թվացյալ շահերի բախման դեպքերը ևս պետք է բացառվեն, որպեսզի նվազեցվեն պաշտոնատար անձի համբավի առնչությամբ այն ռիսկերը, որոնք կարող են վնասել անձի/համակարգի

բարեվարքությանը (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն, Հանրային ծառայությունում շահերի բախման կառավարում, գործիքակազմ 1):

ՏՀԶԿ-ն շահերի բախումը սահմանում է որպես հակասություն պաշտոնատար անձի մասնավոր շահի և պաշտոնեական պարտականությունների միջև, որի պարագայում անձի մասնավոր շահը կարող է ոչ պատշաճ կերպով ազդել պաշտոնեական պարտականությունների իրականացման վրա (ՏՀԶԿ Գործիքակազմ հանրային պետական ոլորտում շահերի բախման կառավարման վերաբերյալ, տե՛ս էջ 13):

Սույն վարույթի շրջանակներում առկա տվյալների ուսումնասիրմամբ պարզ է դառնում, որ քննարկվող գնման գործընթացներին մասնակցելու միակ հայտ ներկայացնողը եղել է համապատասխանաբար «Գավառտրանս» ՍՊԸ-ն: Վերոնշյալի առնչությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված հանգամանքը, սակայն, պաշտոնատար անձին չի ազատում գնման գործընթացի ինքնուրույն փուլ հանդիսացող պայմանագրի կնքման գործընթացում շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողովին գրավոր հայտարարություն ներկայացնելու պարտավորությունից, որով ապահովվում է պաշտոնատար անձի՝ շահերի բախման իրավիճակից զերծ մնալու օրենսդրի կողմից կանխորոշված նպատակը:

Այսպես, Օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված իրավակարգավորումների վերլուծությունից բխում է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին հայտարարություն ներկայացնելու պարագայում անձը պետք է ձեռնպահ մնա հարցի վերաբերյալ գործողություն կատարելուց՝ բացառություն սահմանելով միայն այն դեպքերի համար, երբ անհապաղ գործողություն կատարելը կամ որոշում կայացնելը պայմանավորված է անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ:

Վերլուծելով Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորումները՝ պարզ է դառնում, որ նշված իրավակարգավորմամբ նախատեսվում է շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու

պարտականություն, որը չկատարելու համար վարչական պատասխանատվություն է նախատեսված Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով: Նշված դրույթով սահմանված զանցանքի օբյեկտիվ կողմը դրսևորվում է իրավասու մարմին հայտարարություն չներկայացնելու արարքով:

Վերոշարադրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ իրականացված գնման ընթացակարգերի շրջանակներում պատվիրատուի և «Գավառտրանս» ՍՊԸ-ի միջև վկայակոչված պայմանագրի կնքումն արդեն իսկ վկայում է այն մասին, որ գնման գործընթացում միակ հայտ ներկայացրած և համապատասխան ընթացակարգով հաղթող ճանաչված կամ ընտրված մասնակից ճանաչվելու արդյունքում պայմանագրի կնքման պահին համայնքի ղեկավարին հայտնի է եղել կնքման ենթակա պայմանագրերի կողմ հանդիսացող առևտրային կազմակերպության բաժնեմասնակիցներ հանդիսացող անձանց՝ իր հետ փոխկապակցվածության հանգամանքը:

Վկայակոչված հանգամանքով պայմանավորված՝ վարույթի մասնակիցը պարտավոր էր իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարման վրա իր մասնավոր շահի ազդեցության չեզոքացում ապահովելու անհրաժեշտությունից ելնելով՝ ձեռնպահ մնալ գործողություն կատարելուց, տվյալ պարագայում վկայակոչված պայմանագրի կնքումից և Օրենքով սահմանված ժամկետում հայտարարություն ներկայացնել Հանձնաժողով: Մինչդեռ, վարույթի մասնակիցն օրենքով սահմանված ժամկետում ոչ միայն Հանձնաժողով չի ներկայացրել նշված հայտարարությունը, այլև, որպես պատվիրատուի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում, կատարել է գործողություն՝ կնքելով իր հետ փոխկապակցված անձանց բաժնեմասնակցությամբ կազմակերպության հետ պայմանագիր՝ այդ կերպ հայտնվելով Օրենքի իմաստով շահերի բախման իրավիճակում:

Սույն գործով առկա փաստերի համադրման արդյունքում Հանձնաժողովն եզրահանգում է, որ Գուրգեն Մարտիրոսյանի կողմից իր պաշտոնեական պարտականությունների անաչառ և օբյեկտիվ կատարումն ապահովելու նպատակով չեն ձեռնարկվել օրենքով սահմանված համապատասխան գործողություններ շահերի բախման իրավիճակում չհայտնվելու կամ հնարավոր նման իրավիճակում հայտնվելու պարագայում օրենքով նախատեսված կանխարգելման ընթացակարգերով առաջնորդվելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է ներկայացուցչի կողմից վկայակոչված այն փաստարկին, որ քննարկվող պայմանագրի կնքումից առաջ գնահատող հանձնաժողովը տվել է շահերի բախման իրավիճակի բացակայության մասին հայտարարություն, ապա Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված փաստարկն անհիմն է, քանի որ, տվյալ դեպքում «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով հայտարարություն ներկայացնելու պարտականություն ունեցող սուբյեկտը հանդիսանում է Գուրգեն Մարտիրոսյանը, իսկ հայտարարություն ներկայացնելու համար իրավասու մարմինը՝ Կառուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վարույթի մասնակցի ներկայացուցչի՝ Պարզաբանմամբ ներկայացրած մյուս դիրքորոշմանն առ այն, որ մասնավոր շահը բացակայում է, քանի որ համայնքի ղեկավարի մերձավոր ազգականներից ոչ մեկ չի հանդիսանում «Գավառտրանս» ՍՊԸ-ի իրական շահառու, որի պայմաններում, իրականությունից վերացարկվելու դեպքում, ինչ-որ կերպ հնարավոր կլիներ պատկերացնել, որ այդ հանգամանքը կարող էր ազդել գնահատող հանձնաժողովի անդամների որոշման վրա, արձանագրում է հետևյալը.

Օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ***պաշտոն զբաղեցնող անձի մասնավոր շահը ներառում է որևէ արտոնություն*** *իրեն կամ իր հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև* ***այն*** *անձանց կամ* ***կազմակերպություններին, որոնց հետ*** *ինքը կամ* ***իր հետ փոխկապակցված անձն ունի գործարար****, քաղաքական* ***կամ այլ գործնական*** *կամ անձնական* ***հարաբերություններ****:* ***Գործարար հարաբերությունները ներառում են տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններ, որոնք հանգեցնում են կամ կարող են հանգեցնել օգուտների ստացման այդ հարաբերությունների մասնակիցների կամ նրանցից որևէ մեկի համար****:*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է համարվում մեկ կամ մի քանի անձանց հիմնադրած ընկերությունը, որի **կանոնադրական կապիտալը բաժանված է կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցները պատասխանատու չեն նրա պարտավորությունների համար և

իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավական վիճակը, ինչպես նաև նրա մասնակիցների իրավունքները և պարտականությունները սահմանվում են սույն օրենսգրքով ու սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքով:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

ա**) սույն օրենքով կամ ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել ընկերության կառավարմանը.**

բ) **ստանալ տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ**.

գ) **ստանալ ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը.**

դ) օրենքով սահմանված կարգով իր բաժնեմասը (դրա մասը) օտարել ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների կամ երրորդ անձանց.

ե) անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից.

զ) **ընկերության լուծարման դեպքում բաժին ստանալ ընկերության մնացած գույքից**:

Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով, ընկերության կանոնադրությամբ կամ ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:

Նույն օրենքի 11-րդ հոդվածի համաձայն՝ **Ընկերության մասնակից են համարվում ընկերության պետական գրանցման պահից ընկերության բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունք ունեցող անձինք:**

Վերոգրյալ իրավական նորմերի համադրումից և վերլուծությունից հետևում է, որ գործարար հարաբերությունները **տնտեսական, տնտեսավարման կամ գործարքներից ծագող ցանկացած հարաբերություններն են, որոնք կարող են հանգեցնել օգուտների**, ընդ որում օգուտները կարող են կրել ինչպես նյութական բնույթ, այնպես էլ ոչ նյութական: Միաժամանակ, ՍՊ ընկերության մասնակցությունը ենթադրում է **մասնակցի իրավունքն**

ընկերության գործունեությունից ստացվող շահույթից մաս ստանալու, լուծարման դեպքում ընկերության մնացած գույքից բաժին ստանալու, որոնք իրենց բնույթով նյութական օգուտներ են:

«Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին համաձայն՝ Ընկերությունն իրավունք ունի **ոչ հաճախ, քան եռամսյակը մեկ անգամ իրականացնելու իր շահույթի բաշխում ընկերության մասնակիցների միջև: Շահույթի բաշխման մասին որոշումն ընդունվում է ընդհանուր ժողովի կողմից:**

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ բաշխման ենթակա **շահույթը բաշխվում է** ընկերության մասնակիցների միջև՝ **ըստ ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի**:

«Գավառտրանս» ՍՊ ընկերության Կանոնադրության 4.2-րդ կետի համաձայն՝ Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն (…) ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի (դիվիդենտի) մասը, Ընկերության լուծարվելու դեպքում ստանալ շահույթի իր մասը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ «Գավառտրանս» ՍՊ ընկերությունը, որպես գործող կազմակերպություն, ծավալելով որոշակի գործունեություն, այդ թվում՝ գնման գործընթացների արդյունքում կնքված պայմանագրերի շրջանակներում, **ընկերության համար** ապահովում է (կարող է ապահովել) օգուտներ, այդ թվում՝ նաև շահույթ, **որից մաս ստանալու իրավունք ունեն նրա բոլոր մասնակիցները՝ անկախ մասնակցության չափից և իրական շահառու հանդիսանալու հանգամանքից**: Այսպիսով, Գուրգեն Մարտիրոսյանի հետ փոխկապակցված անձինք պայմանագրի կնքման պահին գործարար կամ այլ գործնական հարաբերությունների մեջ են գտնվել Ընկերության հետ, հետևաբար Ընկերությանհետ Գուրգեն Մարտիրոսյանի կողմից պայմանագիր կնքելը առերևույթ կարող էր հանգեցնել շահերի բախման իրավիճակի առաջացման, որպիսի պայմաններում Գուրգեն Մարտիրոսյանը պարտավոր էր Հանձնաժողով հայտարարություն ներկայացնել: Միաժամանակ, նշվածի համատեքստում Հանձնաժողովը հարկ է համարում ընդգծել, որ ներկայացուցչի կողմից վկայակոչված՝ «Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքով սահմանված՝ իրական շահառուների վերաբերյալ վկայակոչած հիմքերը

սույն վարչական իրավախախտման վերաբերյալ գործին վերաբերելի չեն՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ նախ՝սույն վարույթի քննարկման առարկան է հանդիսանում Գուրգեն Մարտիրոսյանի կողմից Հանձնաժողովին հնարավոր շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չներկայացնելու արարքը, և հետո՝ շահերի բախման հասկացության ներքո ներկայացված փոխկապակցվածությունը կամ օրենքի իմաստով համապատասխան հարաբերությունների մեջ գտնվելը որևէ կերպ չի կարող նույնանալ իրական շահառուի ինստիտուտի հետ: Այս առումով, հատկանշական է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքում բոլոր այն դեպքերում, երբ Օրենսդիրը նպատակ է ունեցել շեշտելու «իրական շահառու» հանդիսանալու հանգամանքը, համապատասխան հոդվածով ուղղակիորեն հղում է կատարվում «Փողերի լվացման և ահաբեկչության դեմ պայքարի մասին» օրենքին (տե՛ս «Հանրային ծառայության մասին» օրենքի 42-րդ հոդվածը): Սույն դեպքում ոչ միայն շահերի բախման վերաբերյալ հոդվածով իրական շահառու հասկացության հղում կատարված չէ, այլև հոդվածի համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ տվյալ ինստիտուտը որևէ կերպ չի կարող նույնանալ կազմակերպությունների հետ փոխկապակցվածության ուժով մասնավոր շահին:

Բացի այդ, տվյալ դեպքում Հանձնաժողովն էական է գնահատում այն հանգամանքը, որ Գուրգեն Մարտիրոսյանի հետ փոխկապակցված անձանց՝ վերջինիս որդիների և քրոջ բաժնեմասնակցության չափն Ընկերությունում հանրագումարային կազմել է 40 տոկոս, ինչը տվյալ դեպքում էական նշանակություն կարող է ունենալ վերջինիս մասնավոր շահի տեսանկյունից՝ ի թիվս այլնի հաշվի առնելով նաև շահերի բախման մեկնաբանման համատեքստում՝ վերոնշյալ միջազգային իրավական փաստաթղթերում տեղ գտած՝ հանրային ընկալման գնահատականները:

Ինչ վերաբերում է ներկայացուցչի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության ընթացքում ներկայացված՝ գնահատման հանձնաժողովի անդամներին և Ընկերությանը՝ որպես վկա վարչական վարույթին ներգրավելու վերաբերյալ ներկայացված միջնորդություններին՝ Հանձնաժողովը գտնում է, որ դրանց բավարարումը վարչական վարույթի բազմակողմանիության, ամբողջականության և լրիվության վրա չի կարող ունենալ ազդեցություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված սուբյեկտներին որպես վկա

ներգրավելու արդյունքում ձեռքբերված ցուցմունքները չեն կարող հանդիսանալ վարույթի ելքի վրա ազդեցություն ունեցող վերաբերելի ապացույցներ: Նշվածի հիմնավորվում է նաև այն հանգամանքով, որ սույն վարույթի առարկան հանդիսանում է հնարավոր շահերի բախման իրավիճակի՝ քննարկվող պայմանագրի կնքման վերաբերյալ Գուրգեն Մարտիրոսյանի կողմից Հանձնաժողով հայտարարություն չներկայացնելու իրավախախտումը, այլ ոչ թե «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված՝ շահերի բախման իրավիճակի առկայության քննարկումը Հանձնաժողովի կողմից:

Այս առնչությամբ, Հանձնաժողովը հարկ է համարում անդրադառնալ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված՝ շահերի բախման առերևույթ իրավիճակի վերաբերյալ համապատասխան վարույթի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ 169.31-րդ հոդվածով նախատեսված զանցանքի հիմքով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթների բովանդակային տարբերությանն ու դրանց առանձնահատկություններին:

Այսպես, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների առերևույթ խախտումների, ինչպես նաև պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների առերևույթ խախտումների, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումներին առնչվող խախտումների, կամ շահերի բախման առերևույթ դեպքերի առկայության պարագայում հարուցում է համապատասխան վարույթ:

Նույն օրենքի 33-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի արդյունքում Հանձնաժողովն ընդունում է եզրակացություն պաշտոն զբաղեցնող անձի կողմից

անհամատեղելիության պահանջների կամ այլ սահմանափակումների խախտման առկայության կամ բացակայության մասին կամ համապատասխան պաշտոն զբաղեցնող անձի կողմից վարքագծի կանոնների խախտման առկայության կամ բացակայության մասին, իսկ իրավիճակային շահերի բախման դեպքի կապակցությամբ՝ շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության մասին:

Մինչդեռ, Վարչական իրավախախտման վերաբերյալ օրենսգրքի՝ 169.31-րդ հոդվածով նախատեսված վարույթի արդյունքում, որպես պատասխանատվության միջոց սահմանված է վարչական տույժը, որը նշանակվում է որոշմամբ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի իրականացման, և վարչական ակտի ընդունման պահանջների պահպանմամբ:

Ընդ որում, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով նախատեսված՝ համապատասխան վարույթի իրականացման շրջանակներում Հանձնաժողովն իրավասու է քննարկել շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության հարցը, մինչդեռ, սույն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի շրջանակներում Հանձնաժողովի քննարկման առարկան հանդիսանում է ոչ թե շահերի բախման իրավիճակի առկայության կամ բացակայության հարցը, այլ հնարավոր շահերի բախման իրավիճակի վերաբերյալ պաշտոնատար անձի կողմից Հանձնաժողով հայտարարություն չներկայացնելու իրավախախտման արարքը:

Հիմք ընդունելով ամբողջ վերոնշյալը՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ վարույթի մասնակցի կողմից խախտվել է Օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջը՝ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու առնչությամբ, որի արդյունքում թույլ է տրվել Օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը:

Հանձնաժողովը, անդրադառնալով վերոնշյալ իրավախախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցին, գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյոք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող

իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյոք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս չի պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Վերոշարադրյալից ելնելով՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ Գուրգեն մարտիրոսյանի կողմից կատարված արարքը հանգեցնում է օրենքով պահպանվող շահերի՝ սույն դեպքում «Հանրային ծառայության մասին» օրենքով ամրագրված՝ շահերի բախմանը վերաբերելի իրավահարաբերությունների բուն էության խաթարմանը՝ հաշվի առնելով այն, որ նշված պայմանագրի կնքմամբ, պաշտոնատար անձը չի ներկայացրել գրավոր հայտարարություն Հանձնաժողովին, և, ըստ էության, ձեռնպահ չի մնացել գործողություն կատարելուց: Միաժամանակ, առկա չեն եղել նաև այն դեպքերը, երբ անհապաղ գործողություն կատարելը պայմանավորված է եղել անձանց կյանքի, առողջության, իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանության անհրաժեշտությամբ: Ավելին, համայնքի ղեկավարը, որպես պատվիրատու, գնումների վերաբերյալ օրենսդրությամբ իրավասու է հանդես գալ նաև լիազորված անձի միջոցով (Կարգի 6-րդ կետ), մինչդեռ, վարույթի մասնակիցը, առնվազն պայմանագրերի կնքման փուլում, տեղյակ լինելով գնման գործընթացների արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների հետ իր փոխկապակցվածության մասին, որևէ գործողություն չի ձեռնարկել շահերի բախման իրավիճակում չհայտնվելու ուղղությամբ:

Այսպիսով, Գավառ համայնքի ղեկավար Հուրգեն Մարտիրոսյանի հետ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով փոխկապակցված անձանց բաժնեմասնակցությամբ, նրանց հետ Օրենքի իմաստով գործարար հարաբերություններ ունեցող «Գավառտրանս» ՍՊԸ-ի հետ իրականացված գնման գործընթացի արդյունքում 2024 թվականի փետրվարի 13-ին N ԳՄԳՀ-ԳՀԾՁԲ-23/2 պայմանագրի կնքմամբ Գուրգեն Մարտիրոսյանն իր լիազորությունների շրջանակում կատարել է գործողություն, որն առերևույթ հանգեցրել է կամ կարող էր հանգեցնել

շահերի բախման իրավիճակի առաջացման, մինչդեռ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ «Հանրային ծառայության» մասին օրենքով սահմանված կարգով 10-օրյա ժամկետում շահերի առկայության մասին գրավոր հայտարարություն չի ներկայացրել Հանձնաժողով՝ խախտելով օրենքով սահմանված շահերի բախմանը վերաբերելի իրավակարգավորումների պահանջը:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.31-րդ հոդվածի 1-ին մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գավառ համայնքի ղեկավար Գուրգեն Մարտիրոսյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի՝ **300 000** (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գուրգեն Մարտիրոսյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ